ԵՐԿՕՐՅԱ ԱՅՑ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Օգոստոսի 21-22-ը .Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մի խումբ միաբանների ուղեկցությամբ, երկօրյա այցով մեկնեց Սյունյաց թեմ՝ կատարելու Ղափանի Ծավ գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու Սուրբ Սեղանի օծման արարողությունը:

Տեղապահ Հորը Աբրահամ Սրբազանը ծանոթացրեց Սյունյաց թեմում տարվող շինարարական մեծածավալ աշխատանքներին:

Այցելության առաջին հանգրվանը եղավ Եղեգնաձոր քաղաքը, որտեղ Սբ. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ կառուցվել էր երկհարկանի նորակառույց մի շենք: Շինարարական ներքին հարդարման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ էին: Ըստ Աբրահամ Սրբազանի բացատրության, շենքը մոտ ապագայում շահագործման կհանձնվի և կծառայի իբրև կրոնակրթական և քարոզչական կենտրոն: Սբ. Աստվածածին եկեղեցու թիկունքի մասում գտնվող տափարակ բլուրը, համաձայն առաջնորդ-Սրբազանի ծանուցման, ե դարի պատմիչ Եղիշեի մատնանշած այն վայրն է, ուր նահատակվել է հայկական զորքի մի մասը. դա են ապացուցում բլրի վրա գտնվող գերեզմանները և հին բերդի կիսաավերված ու հողի տակ անցած պարիսպը: Սրբազանն ասաց, որ հիշյալ վայրի բարեկարգման աշխատանքները ներգրավված են թեմի ապագա ծրագրի մեջ, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել նաև մի հուշարձան՝ ի հիշատակ նահատակված հայ ռազմիկների եզակի վայրի, որը կդառնա մի նոր ուխտատեղի:

Այնուհետև Սրբազան Հոր առաջնորդությամբ Տեղապահ Սրբազանն այցելեց ՀՀ ամենամեծ գյուղը՝ Մալիշկա, որտեղ կառուցվում էր Սբ. Հարություն եկեղեցին՝ տեղաբնակ Աբրահամյան եղբայրների նյութական հովանավորությամբ:

Ապա մեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Գորիս, Սյունյաց թեմի առաջնորդանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որը կառուցվել էր դեռևս Տ. Տ. Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի օրոք: Աբրահամ Սրբազանը ներկաներին ծանոթացրեց վերանորոգված եկեղեցու հովվատան շրջակայքի և պարիսպների կառուցապատման աշխատանքներին:

Երեկոյան Մայր Աթոռի հոգևորականները, Տեղապահ Սրբազանի գլխավորությամբ, ուղևորվեցին Ղափան:

Ղափանում Մայր Աթոռից ժամանած հոգևորականներին դիմավորեց Սյունիքի մարզպետ պրն. Ռոման Նավասարդյանը: Ջերմ ընդունելությունից հետո, Ներսես Սրբազանը մարզպետի հետ միասին այցելեցին քաղաքի

կենտրոնական մասի բարձրավանդակում գտնվող կիսակառույց Սբ. Հարություն եկեղեցի, որի շինարարական աշխատանքներն սկսվել էին 1997 թ. գարնանը, սակայն ֆինանսավորման դժվարությունների պատճառով կառուցման ավարտը դանդաղել էր: Ծանոթանալով եկեղեցու շինարարական խնդիրներին՝ Տեղապահ Սրբազան Հայրը եկեղեցու գմբեթի ներքո հավաքված հոգևորականների հետ «Հայր մեր» արտասանեց, և «Որախ լեր» շարականի երգեցողությամբ մի փոքր արարողություն կատարվեց՝ իբրև Նավակատիք սուրբ եկեղեցու: Ներսես Սրբազանը հավաքվածների ներկայությունը վկայություն համարեց այն համոզումով, որ Սբ. Հարությունը ամեն գնով պետք է վեր խոյանա և ծառայի ի սպաս հավատացյալ ժողովրդի: Սյունիքի մարզպետն իր հերթին, կարևորելով հոգևոր կյանքի անհրաժեշտությունը, խոստացավ նյութապես օժանդակել քաղաքի եկեղեցու շինարարությանը:

Կիրակի օրը, օգոստոսի 22-ին, Ղափանից շուրջ 40 կմ հեռավորությամբ լեռների գողտրիկ լանջերին փռված Ծավ գյուղում ժողովրդական տոնախմբություն էր, քանի որ պիտի տեղի ունենար Սբ. Գևորգ եկեղեցու օծման արարողությունը, որի վերականգնողական աշխատանքները (ներառյալ՝ փոքրիկ զանգակատուն-գմբեթը) հանձն էր առել այդ գյուղում ծնված պրն. Էդիկ Մարգարյանը: Բազիլիկ ոճի այդ եկեղեցին կառուցվել էր Ճարտարապետ Ալեքսանյանի կողմից 1907 թ.:

Սուրբ Պատարագի ընթացքում կատարվեց եկեղեցու օծման արարողությունը՝ ձեռամբ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի: «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողությամբ Սրբազան Հայրը սրբալույս մյուռոնով օծեց Սուրբ Սեղանի գագաթը, աջ ու ձախ անկյունները և ճակատը: Եկեղեցու օծման առիթով նախ առաջնորդ Սրբազանն իր շնորհակալության և գնահատանքի խոսքն ուղղեց բարերար Էդիկ Մարգարյանին, աշխատող վարպետներին և Ծավ գյուղի քաջ բնակիչներին՝ ասելով. «...այստեղ թերևս մոռացված բոլորից, կտրված աշխարհից ապրում ենք մենք՝ սյունեցիներս, ապրում ենք մենք որպես ազգ ու ժողովուրդ և գիտենք մեր արժեքը, գիտենք մեր նախնիների թողած ժառանգության արժեքը, գիտենք հավատալ, գիտենք կռվել, աշխատել և ապրել մեր հայրենիքում:

...Սրբազան Հայր, վստահեցնում ենք, որ մենք այստեղ դարեր շարունակ կանք, եղել և մնում ենք որպես Հայաստանի և Հայ Եկեղեցու ամրակուռ պարիսպը»:

Ապա իր շնորհակալությունն ու երախտիքը հայտնելով Նորին Ամենապատվությանը՝ Աբրահամ Սրբազանը հրավիրեց Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բյուր օրհնություն փոխանցելու ժողովրդին:

Տեղապահ Սրբազանը շնորհավորեց Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանին, ապա պրն. Էդիկ Մարգարյանին և եկեղեցում հավաքված հավատացյալ հոծ ժողովրդին՝ առ ի գնահատումն կատարված աշխատանքի, և ասաց. «Այս եկեղեցու ծոցից պիտի ծնվեն ձեր ապագա

սերնդի զավակները: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերում եմ ձեզ Լուսավորչա-
հաստատ Սուրբ Էջմիածնի օրհնությունները և մաղթում, որ այս հեռավոր
Հայաստանի ծայրամասում, որ ապրում եք, ձեր հավատքի վրա ամուր մնաք,
հաստատ մնաք, ոչ մի աղանդավոր թող ոտք չդնի այս գյուղից ներս և իր
աղանդավորական վարդապետությամբ չշփոթեցնի ձեզ, և դուք կապված
լինեք, հաստատ լինեք ձեր հավատքի վրա, ինչպես մեր Հավատքի Հայրը՝ Սբ.
Գրիգոր Լուսավորիչն ուսուցանել է, նույն ձևով, նույն հավատքով, մեր
պապերի հավատքով շարունակենք այս եկեղեցին կենդանի պահել, ապրող և
շնչող պահել»:

Պատարագի սրբազան արարողությանը հյուրաբար ներկա էր «Պրոմեթևս» բաժնետիրական ընկերության «Մշակույթ» հեռուստաալիքի գլխավոր տնօրեն պրն. Արմեն Սմբատյանը և նրան ընկերակցող հեռուստաալիքի տեսագրող խումբը, որոնք էլ նկարահանեցին ողջ արարողությունը:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց 120 երեխաների խմբակային մկրտություն, մատաղի օրհնություն և բաժանվեց հոգևոր գրականություն:

ՄԱՄԻԿՈՆ ՄՐԿ. ԱՎԵՏԻՍՅԱՆ